Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի պատասխաններ՝ 9-րդ դասարան

1.2. Գետակի վրա փոքրիկ ջրաղաց կար, կողքին՝ մի խրճիթ, որտեղ ապրում էր ջրաղացպանն իր կնոջ ու մանկան հետ: Շուրջբոլորը պ-րում էին վարսաթափ ուռիները, և գետակն անուշ կարկաչյունով ասես մի չքնաղ հեքիաթ էր հյուսում:

Թավշաթև թիթեռների խայտանքով զմայլված՝ մի օր մանուկը մոլորվելով հայտնվեց մեծ ճանապարհին և վախից սկսեց աղեխարշ հեծկլտալ: Անցնող քարավանից մի մեծատուն, գիրկն առնելով տղային, տարավ իր տուն և քանի որ զավակ չուներ, որդեգրեց:

Թեև մեծանում էր խանդակաթ ու գորովալից միջավայրում, սակայն, ի զարմանս բոլորի, տղան միշտ տխուր էր. սրտմաշուկ մի թախիծ տանջում էր նրան: Հենց նայում էր պատուհանից, հոգին սլացքով թռչում էր հեռու՝ մի ուրիշ աշխարհ, որ խաբկանքի նման մեկ երևում, մեկ անէանում էր, ու տարրալուծվող մշուշում տարորոշվում էր ծանոթ մի տնակ:

Երազի մեջ հայտնվելու պահից այդ տունը գտնելը դարձել էր նպատակ: Եվ տղան որոշեց՝ անպայման կփնտրի ու կգտնի իր մղձավանջներում պատկերված տեսիլքը:

Հաջորդ օրը՝ վաղ արևածագին, նա հա-շտապ հավաքեց իրերն ու ճամփա ընկավ:
Շրջեց աշխարհով մեկ ու մի առավոտ արեգակի՝ երկինքը բոցավառող շողերի ներքո վերջապես գտավ հարազատ քողտիկը: Տան ներսում՝ բուխարու կողքին, մի ալևոր էր նստած՝ տանջալլուկ հայացքը կրակին, իսկ տարեց մի կին՝ արցունքախառն ու տամու- աչքերով, սեղան էր զցում: Նա ափսեի մեջ դրեց կերակուրն ու տխուր մրմնջաց.

- Սա էլ որդուս համար:

Զավակին կորցնելու օրվանից մայրը որդու բաժին հացը տալիս էր պանդուխտներին:

Նույն պահին դուռը բացվեց, ու որդին կարոտով փարվեց ծնողներին:

3. Չնայած(թեև,թեպետ) խանդակաթ ու գորովալից միջավայրում մեծանալուն՝ տղան, ի զարմանս բոլորի, միշտ տխուր էր:
Պատուհանից նայելուն պես հոգին սլացքով թռչում էր հեռու՝ խաբկանքի նման մեկ երևացող, մեկ անէացող մի ուրիշ աշխարհ: Կամ՝ Պատուհանից նայելուն պես հոգին սլացքով թռչում էր հեռու՝ մի ուրիշ աշխարհ՝ խաբկանքի նման մեկ երևացող, մեկ անէացող:
Եվ տղան որոշեց անպայման փնտրել ու գտնել իր մղձավանջներում պատկերված տեսիլքը:
4. մոլորվելով/ գիրկն առնելով/ - ձևի պարագա, հայտնվելու(պահից)- որոշիչ, գտնելը- ենթակա, հեծկլտալ-ուղիղ խնդիր, կորցնելու- որոշիչ
5.դիպակ-մետաքսյա նախշազարդ կտոր **պարարտ**- 1.գեր,չաղ, գիրգ, 2.բարեբեր, 3.լիքը
վեհերոտ-երկչոտ, վախկոտ , ընկճված, **եղրևանի**- յասաման, շեփորուկ,
նկրտում- բուռն ցանկություն, տենչ, **լաջվարդ**- 1.կապույտ քար, 2.ընդհանրապես՝ կապույտ,
իմաստակ-թերուս,տգետ, **բավիղ**- լաբիրինթոս, խճճված, անելանելի ճանապարհ
ծնծղա- հարվածային երաժշտական գործիք, **մույթ**-կամարակալ, հենարան, նեցուկ, սյուն,
7.Գողգոթայի ճանապարհ- տանջանքի՝ չարչարանքի՝ նահատակության ուղի:

Ըստ Աստվածաշնչի՝ Քրիստոսը, իր ուսերին դրած խաչափայտը, ելնում էր այն վայրը, որը եբրայերեն կոչվում էր Գողգոթա (թարգմանաբար այն նշանակում է կառափնարան), ուր և նրան խաչին գամեցին:

Գնահատման չափանիշներ – 9-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

<u>Ուշադրություն:</u> Շարադրության մեջ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր, կետադրական, քերականական, բառագործածական և ոճական սխալների համար՝ 0,25 միավոր, սխալ տողադարձի համար՝ 0,1 միավոր: